# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՕ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 29 - 30 (16424) ՇԱԲԱԹ, 16 ԱՊՐԻԼԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՆԱԽԱԴՐՅԱԼԸ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է




*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Միացյալ Արաբական Էմիրաթներ կատարած այցի շրջանակներում մասնակցեց Դուբայում անցկացված «Գլոբալ լիդերների բանավեճեր» ամենամյա ներդրումային գագաթաժողովին:*

Իր ելույթում, վարչապետն անդրադարձավ Վրաստանի ռազմավարական աշխարհագրական դիրքի ներդրումային միջավայրի գրավչության, տարանցումային ներուժի եւ գործարարության ծեւակերպման դյուրացման հարցերին: Գիորգի Կվիրիկաշվիլին գագաթաժողովի մասնակիցներին տեղեկատվություն ներկայացրեց Վրաստանի ներդրումային հնարավորությունների վերաբերյալ: Նրա պարզաբանմամբ, վերջին տարիների գլխավոր ծեռքբերումներից մեկը Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ծեւակերպումն էր, ինչը նշանակալիորեն ավելացրել է երկրի ներդրումային գրավչությունը: «Վերջին մի քանի տարիների ընթացքում, Վրաստանում անմիջական օտարերկրյա ներդրումները աճել են: 2014 թվականին վավերացվել է ներդրումների 80 տոկոսանոց աճ: Գլխավոր պատճառը բիզնեսի զարգացմանը կողմնորոշված քաղաքականությունն է, բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված անընդմեջ բարեփոխումները, կայուն արտաքին

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 9-Ը ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

## ՓՈԽՎԵՑ ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵԿՏՈՐԸ, ԱՅԼԵՎ ԳԻՏԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Ապրիլի 9-ին Վրաստանում նշվեց ազգային միասնության օրը:*



Քսանյոթ տարի առաջ՝ 1989 թվականի ապրիլի 9-ին, Թբիլիսիի կենտրոնում, խորհրդարանի շենքի մոտ խորհրդային զինված ուժերը դաժանորեն ճնշեցին խաղաղ ցույցը, որի արդյունքում զոհվեց 21 մարդ, հազարավոր մարդիկ թունավորվեցին: Երկու տարի անց, նույն օրը, Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց Վրաստանի անկախ պետականության վերա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՎԱՆԴՈՒՅԹ

## ԱՊՐԻԼԻ 14-Ը՝ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐ

*Ապրիլի 14-ին Վրաստանը նշեց վրաց լեզվի օրը: Տոնի շրջանակներում երկրի մասշտաբով անցկացվեցին մի շարք միջոցառումներ:*



Մասնավորապես, ծեռագրերի ազգային կենտրոնում բացվեց «Դեդա էնա» տանող ճանապարհը» ցուցահանդեսը, որը նվիրված էր Յակոբ Գոգեբաշվիլու «Դեդա էնա» ծեռնարկի առաջին լույսընծայման 140-ամյակին:

Հիշեցնենք, որ ապրիլի 14-ին վրաց լեզվի օրը նշվում է 1990 թվականից: Այսօրվա դրությամբ, վրաց լեզուն հանդիսանում է Վրաստանի պետական լեզուն եւ այդ լեզուն մայրենի է աշխարհի շուրջ 4 միլիոն մարդկանց համար: Արդի վրացերենն ունի 17 բարբառ: Վրաց լեզվով առաջին գիրքը, 476 թվականով թվագրված «Շուշանիկի նահատակությունն» էր, որի հեղինակն էր Յակոբ Ցուրտավելին:

ՎՐԱՍՏԱՆ-ԵԱՀԿ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

*Ապրիլի 13-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում է ունեցել ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն կոմիսար Աստրիդ Թորսի հետ:*



Կոմիսարը երկրի ղեկավարին փոխանցեց օսական կողմի շնորհակալությունը՝ կապված Վրաստանի նախագահի նախաձեռնությամբ եւ նախագահի պահուստային հիմնադրամի ֆինանսավորմամբ, Վրաստանի ժողովրդագրական թանգարանում օսական տան բացման հետ:

Հանդիպմանը Գիորգի Մարգվելաշվիլին եվրակոմիսարին ներկայացրեց տեղեկատվություն Վրաստանի ազգային փոքրամասնությունների մասին, անդրադարձ կատարվեց փոքրա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ԵՐԿԻՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՊՐԵԼ ՅՈԹԱՄՍՅԱ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՎ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նախագահին խնդրել է ընտրությունների նշանակման կապակցությամբ նոր հրամանագիրը հրատարակել ընթացիկ տարվա հուլիսին:*

Ապրիլի 14-ին տեղի ունեցած կառավարության նիստին նա հայտարարեց, որ գերադասելի կլինի, եթե դա տեղի ունենա հուլիսի 8-ին, ընտրություններից երեք ամիս շուտ: «Հոկտեմբերի 8-ին խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին որոշումն ընդունվել էր՝ ելնելով կոնկրետ պատճառներից: Իրավաբանական որոշակի շեղում թույլ տր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԿՀՐԱՊԱՐԱԿՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

*Ապրիլի 14-ին լրագրողների հետ հանդիպմանը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ ընտրությունների օրվա կապակցությամբ, ինքը մայիսի սկզբներին կհրապարակի նոր հրամանագիր:*

«Նախ, որոշվել է ընտրությունների օրը՝ հոկտեմբերի 8-ը: Ինչ վերաբերում է փաստաթղթին, որը բառացիորեն համաձայնեցվել էր կառավարության հետ եւ, որը այսօր չստորագրվեց, ապա ցանկանում եմ հաղորդել, որ ես այն հրապարակեցի ելնելով նրանից, որ կառավարությունը ինձ համոզեց նրանում, որ մինչեւ ընտրությունների անցկացումը 60 օր շուտ ընտրությունների օրվա հայտարարումը ֆինանսական առումով կործանարար է: Պարզվեց, որ դա այդպես չէ եւ պարզվեց, որ ընտրությունների օրը կարելի է նշանակել: Հետեւաբար, ես մայիսի սկզբներին կհրապարակեմ հրամանագիր, որտեղ կլինի մի առաջարկություն ընտրությունների օրվա նշանակման վերաբերյալ»,- հայտարարեց նախագահը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ




*Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունում անցկացվեց սոցիալական գործընկերության եռակողմ հանձնաժողովի նիստ:*

Հանձնաժողովի նիստին առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոյի հետ միասին մասնակցեցին կրթության նախարար Թամար Սանիկիձեն, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Նոդար Ջավախիշվիլին, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Իրմա Քավթարաձեն, այլ գերատեսչություն-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՐՑՈՒՄ

## NDI-Ի ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՆՈՐ ՀԱՐՑԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՑՆՈՒՄ

*ԱՄՆ-ի ազգային դեմոկրատական ինստիտուտը (NDI) ներկայացրեց «Հասարակական տրամադրությունը Վրաստանում» հետազոտության շրջանակներում փետրվարի 23-ից մինչեւ մարտի 14-ն ընկած ժամանակաշրջանում անցկացրած հարցման արդյունքները:*

Հարցմանը մասնակցել է 3,9 հազար մարդ: Վիճակագրական անճշտությունը կազմել է 1,6 տոկոս:

NDI-ի հետազոտությունը ֆինանսավորել է Միջազգային զարգացման եւ համագործակցության շվեդական գործակալությունը (SIDA): Հարցումներն անցկացրել է Կովկասի հետազոտական ռեսուրսների կենտրոնը (CRRC):

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՆԱԽԱԴՐՅԱԼԸ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առեւտրական հարաբերությունները եւ Վրաստանի ռազմավարական դիրքորոշումը: Մենք առավելագույնս օգտագործում ենք այն հնարավորությունները, որն ընձեռում է Եվրամիության հետ ազատ առեւտրի պայմանագիրը: Այն երկրների համար, որոնք չունեն Եվրամիության հետ նման համաձայնագիր, գերադասելի է Վրաստանում կատարել ներդրումներ: Հարկ է ընդգծել նաեւ երկրում հաստատված ցածր հարկերը: Այդ առումով Վրաստանն իններորդն է աշխարհում»,- հայտարարեց վարչապետը:



Գիորգի Կվիրիկաշվիլու հավաստմամբ, կառավարությունն սկսում է բարեփոխումների նոր շարք, որի նպատակն է երկրի տնտեսական զարգացման արդյունավետ կառավարման, կրթության ու ենթակառուցների, ինչպես նաեւ տարածաշրջանային զարգացման համակարգերի բարեփոխումը:

Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ էմիրաթների գահաժառանգ շեյխ Մուհամադ Բեն Զայդ Ալ Նախայանի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների եւ կոնկրետ նախագծերի իրականացման հետ կապված հարցեր: Հանդիպմանը որոշում ընդունվեց, ըստ որի Վրաստան կժամանի հատուկ խումբ, որը կուսումնասիրի ներդրումների իրականացման կոնկրետ ոլորտները:

Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Միացյալ Արաբական էմիրաթների վարչապետ Մուհամեդ Բին Ռաշիդ Ալ Մաքթումի հետ: Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ առեւտրատնտեսական համագործակցության խորացման հեռանկարները:

ԱՊՐԻԼԻ 9-Ը ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

# ՓՈԽՎԵՑ ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵԿՏՈՐԸ, ԱՅԼԵՎ ԳԻՏԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



կանգնման հռչակագիրը:

Ապրիլի 9-ի գիշերը, ի նշանավորումն 27-ամյա վաղեմության իրադարձության, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեի եւ փախստականների ու բռնագաղթվածների հարցերով նախարար Սոզար Սուբարու ուղեկցությամբ, Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում ծաղիկներ դրեց զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Զոհվածներին հարգանքի տուրք մատուցողների թվում էին նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Բազմազգ Վրաստան» համաքաղաքացիական շարժման ղեկավար Առնոլդ Ստեփանյանը:

Ինչպես հայտարարեց վարչապետը, ապրիլի 9-ը փոխեց ոչ միայն երկրի զարգացման վեկտորը, այլեւ հասարակության գիտակցականությունը: «Այդ օրը Վրաստանի նորագույն պատմության մեջ նշվեց որպես ողբերգական էջ: Դա ինքնազոհության օրինակ էր եւ այդ օրը թափված արյունը փոխեց ոչ միայն երկրի զարգացման վեկտորը, այլեւ գիտակցականությունը, արմատավորելով հավատ, որ կայունությունն ու արիությունը հնարավոր է հակադրել շատ ավելի գերազանցող ուժերին: Ցավոք, հաջորդած տարիներին այդ օրվա հերոսներին ավելացան շատ անուններ»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Ապրիլի 9-ի առավոտյան Վիրահայոց թեմի ներկայացուցիչները Ռուսթավելու պողոտայում ծաղկեպսակ դրեցին զոհերի հիշատակը հավերժացնող կոթողին: Մինչ այդ Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր ծառայողներ Տեր Նարեկ քահանա Ղուշչյանն ու Տեր Ղեւոնդ քահանա Թոփաշյանը հոգեհանգստյան կարգ մատուցեցին հայկական եկեղեցու բակում կանգնեցված Ապրիլի 9-ի զոհերին նվիրված խաչքարի մոտ:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու կարգադրությամբ, 1989 թվականի ապրիլի 9-ի զոհերի եւ տուժյալների ընտանիքների համար հատկացվել է 55 հազար լարի: Այդ մասին հայտարարեց նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշաշվիլին՝ հավելելով, որ այդ գումարն առանձնացվում է նախագահի պահուստային հիմնադրամից:

# ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՀՈՒՇԱՔԱՐԵՐ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ



*Նինոծմինդայում, «Հայոս-Քարթլոս» քաղաքային զբոսայգում հանդիսավոր պայմաններում անցկացվեց Վրաստանում ապրիլի 9-ի զոհերի եւ Հայաստանում դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհվածների հիշատակին նվիրված հուշաքարերի բացումը:*

Միջոցառմանը մասնակից նինոծմինդացիներն ու տեղական իշխանությունների ներկայացուցիչները ծաղիկներ դրեցին եւ հարգանքի տուրք մատուցեցին զոհերի հիշատակին: Հուշաքարերից սպիտակ սավանը հանեցին Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլայանը եւ սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը:

Հուշաքարերի հեղինակն է Մեծ Խանչալի գյուղի բնակիչ, քանդակագործ Ռազմիկ Շահբազյանը:

Միջոցառման շրջանակներում Նինոծմինդայի Կլոր լճի շրջակայքում անցկացվեց զանգվածային ծառատունկ: Այդ նպատակով 1700 տնկիները ձեռք էին բերվել Հենզել Մկոյանի ու Վրաստանի բնապահպանության նախարար Գիգլա Ագուլաշվիլու օգնությամբ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

***Ապրիլի 13-ին Երեւանում անցկացվեց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Իրանի էներգետիկայի նախարարությունների ղեկավարների հանդիպումը՝ նվիրված էլեկտրաէներգետիկական ոլորտում տարածաշրջանային համագործակցությանը:***



Հանդիպմանը մասնակցեցին Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Լեւոն Յոլյանը, ՌԴ էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակը, ԻԻՀ էներգետիկայի նախարար Համիդ Չիթչյանը, Վրաստանի էներգետիկայի փոխնախարար Իլիա Էլոշվիլին:

Հանդիպման ավարտին ստորագրվեց Հյուսիս-Հարավ էլեկտրաէներգետիկական միջանցքի ձեւավորման նախաձեռնության իրականացման նպատակով անհրաժեշտ ճանապարհային քարտեզը:

Քառակողմ ծրագրով նախատեսվում է մինչեւ 2018 թվականի վերջ եւ 2019-ի սկիզբ շահագործման հանձնել Հայաստան-Վրաստան 400/500 կՎ էլեկտրահաղորդման գիծը եւ հաստատուն հոսանքի ներդիրով ենթակայանը: Դրա արդյունքում կապահովվի Վրաստանի էներգետիկ համակարգի հետ զուգահեռ ասինխրոն ռեժիմում աշխատանքի հնարավորություն եւ էլեկտրաէներգիայի փոխհոսքի հզորությունը առաջին փուլում կկազմի 350 Մվտ՝ մինչեւ 2021 թվականը հասնելով 700 Մվտ-ի: Մինչ նշյալ ժամկետը նախատեսվում է շահագործման հանձնել նաեւ Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման երկշղթա գիծը: Այն թույլ կտա Իրանի հետ էլեկտրաէներգիայի փոխհոսքերը հասցնել ընդհուպ մինչեւ 1200 Մվտ հզորության:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐՈՅՍՄԱՆԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏ, ԱՆԴՐԵՅ ՊԱՐՈՒԲԻՅԻՆԸ՝ ՌԱԴԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

*Գրեթե երկու ամիս Ուկրաինայում շարունակվող քաղաքական ճգնաժամն ապրիլի 10-ին լուծում ստացավ: Վարչապետ Արսենի Յացենյուկը հայտարարեց, որ վայր է դնում իր լիազորությունները:*

*Ապրիլի 13-ին Ուկրաինայի Գերագույն ռադան 38-ամյա Վլադիմիր Գրոյսմանին ազատեց օրենսդիր մարմնի նախագահի պաշտոնից եւ հաստատեց երկրի վարչապետի պաշտոնում՝ միաժամանակ բավարարելով կառավարության նախկին ղեկավար Արսենի Յացենյուկի պաշտոնաթողության խնդրանքը:*

*Ուկրաինայի Գերագույն ռադան հաստատեց նաեւ նախարարների կաբինետի նոր կազմը, որն ապրիլի 13-ին համաձայնեցվել էր կոալիցիայի ժողովում եւ Ուկրաինայի նոր վարչապետ Վլադիմիր Գրոյսմանի կողմից ներկայացվել խորհրդարանի լիագումար նիստում:*

*Նույն օրը Ուկրաինայի Գերագույն ռադան 45-ամյա Անդրեյ Պարուբիյին ազատել է խորհրդարանի նախագահի առաջին տեղակալի պաշտոնից եւ նրան նշանակել Գերագույն ռադայի նախագահ: Նշենք, որ Անդրեյ Պարուբիյին Գերագույն ռադայի պատգամավոր էր ընտրվել Լվովից եւ 2013-14 թվականներին Կիեւում ծավալված իրադարձությունների ժամանակ հանդիսանում էր Մայդանի ինքնապաշտպանության պարետը:*

ՀՆԴԿԱՍՏԱՆ

## ՀՐԴԵՀ ՏԱՃԱՐՈՒՄ

*Հնդկաստանի Կերալա նահանգի Կոլամ քաղաքի տաճարներից մեկում բռնկված հրդեհի զոհերի թիվը կազմել է 102, տուժածներինը՝ 350 մարդ:*

*Հրդեհի բռնկման ժամանակ Պուտինգալ տաճարում մոտ 15 հազար մարդ է գտնվել: Տաճարը հիմնովին այրվել է:*

*Ըստ ավանդույթի, տեղի համայնքները մրցել են, թե ով ավելի շատ գույնզգույն կրակներ կարձակի գիշերային երկինք: Ականատեսների խոսքով՝ տաճարի մոտի հրապարակը լեփ-լեցուն էր հրավառության տեխնիկայով, որը եւս բռնկվել է: Ոստիկանության գնահատմամբ՝ զոհերի թիվը կարող էր ավելի մեծ լինել, եթե տաճարը գտնվեր ոչ թե բաց տարածքում, այլ քաղաքի թաղամասերում:*

ՃԱՊՈՆԻԱ

## ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Ապրիլի 14-ին Ճապոնիայի Կյուսյու կղզում տեղի ունեցած 6,5 մագնիտուդով երկրաշարժի զոհ է դարձել ինը մարդ, հիվանդանոցներ են տեղափոխվել գրեթե հազար բնակիչներ: Կյուսյուում տարհանվել է 44 հազար 449 մարդ: Մոտավորապես 14,5 հազար տներ մնում են առանց էլեկտրականության, եւս 25 հազարն՝ առանց ջրի: Ամենաուժեղ ցնցմանը հաջորդել են 3,3-ից մինչեւ 6,4 մագնիտուդով 120-ից ավելի հետցնցումներ:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԱՆՑԿԱՑՎԵՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ների ներկայացուցիչներ:

Ինչպես հայտարարեց Դավիթ Սերգեենկոն, եռակողմ հանձնաժողովը այն գլխավոր կառույցն է, որը սահմանում է աշխատանքային քաղաքականության հիմունքները, քննարկում աշխատանքային վեճերը, հետեւում աշխատանքային շուկայի զարգացումներին եւ իրականացնում միջազգային պայմանագրերի վավերացումը:

Իր հերթին, Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեի գնահատմամբ, հանձնաժողովը կարեւոր նշանակություն ունի, քանի որ այստեղ որոշումները ընդունվում են սոցիալական գործընկերների՝ գործատուի եւ պետության մասնակցությամբ:

Նոդար Ջավախիշվիլին առանձնակի ընդգծեց սոցիալական խարտիայի առանձին հոդվածների վավերացման եւ գործողությունների ծրագրի քննարկման հարցը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

***Ապրիլի 11-ին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հանդիպում է ունեցել վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչների հետ:***



Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում բանկի աջակցությամբ իրականացվող նախագծերն ու առաջիկա համագործակցության ուղիները:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան նաեւ Վրաստանի համար բանկի քառամյա ռազմավարությանը, որը նախատեսում է երկրի համար առաջնահերթային բոլոր ուղիները, այդ թվում՝ նաեւ մասնավոր հատվածի, էներգակախվածության, տարածաշրջանային եւ գլոբալ ինտեգրման աջակցության հարցերին:

«Ներկա դրությամբ, վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ, երկրում ֆինանսավորվում են էներգետիկայի եւ մունիցիպալային ենթակառույցների կարեւորագույն նախագծեր: Բանկը ակտիվորեն համագործակցում է նաեւ մասնավոր սեկտորի հետ»,- հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին՝ հավելելով, որ առաջիկայում կստորագրվեն կենցաղային մնացորդների կառավարման ֆինանսավորման հետ առնչվող նոր պայմանագրեր:

ԿՐԹԱԿԱՆ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է



***Ապրիլի վերջերին ուսուցիչները կստանան ավելացված աշխատավարձ: Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, պաշտոնական առաջընթացի սխեմայի շրջանակներում ուսուցիչների աշխատավարձը ավելացվել է ապրիլի 1-ից:***

Նրա պարզաբանմամբ, բազային աշխատավարձը ավելացվել է եւս 50 լարիով:

«2012 թվականին մենք բազային աշխատավարձն ընդունեցինք 245 լարիի չափով: Այսօրվա փոփոխությունների արդյունքում այն կազմել է 405 լարի, ինչը կազմում է մոտ 65 տոկոսանոց աճ: 2016 թվականի ապրիլից պրակտիկ ուսուցիչների միջին աշխատավարձը կկազմի 600 լարի, ավագ ուսուցիչներինը՝ 800 լարի, իսկ առաջատար ուսուցիչների աշխատավարձը կլինի 965 լարի»,- հայտարարեց Սանիկիձեն եւ հավելեց, որ ուսուցիչների աշխատավարձի հերթական ավելացումը կիրականացվի 2017 թվականի հունվարի 1-ին եւ աշխատավարձը հասցվելու է 800-900 լարիի:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

***Ազգային փոքրամասնությունների հարցերով, Վրաստանի նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին այցելեց Ախալցիխեում գործող Սամցխե-Ջավախեթիի համալսարան, ծանոթացավ «Ազգային փոքրամասնությունների երիտասարդական նախաձեռնությունների աջակցություն» նախագծի նախագահական պահուստային հիմնադրամից ֆինանսավորման ընթացքի հետ:***



Երկրի ղեկավարի աշխատակազմի եւ համալսարանի միջեւ ձեւակերպված հուշագրի շրջանակներում, վերոնշյալ նախագիծը իրականացվում է երկրորդ տարին եւ, որի նպատակն է բարձրացնել Ջավախեթիի սովորող երիտասարդության կրթական եւ քաղաքացիական ինքնագիտակցության մակարդակը, աջակցել մշակութային զարգացմանն ու երիտասարդական նախաձեռնությունների կիրարկմանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՆԱՏՕ-Ի ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ



***Վրաստանում ՆԱՏՕ-ի շաբաթվա շրջանակներում, եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն Ախալքալաքիում բացեց ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը:***

Միջոցառումն անցկացվեց Մշակույթի տան դիմաց, երեխաների մասնակցությամբ, ովքեր վրացական եւ հայկական երգ ու պարի ներքո կազմեցին ՆԱՏՕ բառը:

Միջոցառմանը Դավիթ Բաքրաձեի հետ միասին մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի նահանգապետ Ակակի Մաճուտաձեն, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների տեղական ինքնակառավարման ներկայացուցիչները:

Սամցխե-Ջավախեթիում ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության տեղեկատվական կենտրոնը գործելու է Ախալքալաքիի քաղաքացիական ռեեստրի շենքում: Կենտրոնը գլխավորում է Թեոնա Զուրաբիշվիլին:

«Նպատակը միայն այն չէ, որ տրամադրենք տեղեկատվություն, այլ նաեւ հավաքենք հարցեր, որոնցով հետաքրքրված են տարածաշրջանում, որպեսզի պատասխանենք այդ հարցերին տեղեկատվական կենտրոնի օգնությամբ, տարածելով իրավասու պատասխաններ: Օրինակ. բերենք գյուղատնտեսության, տնտեսության, էներգետիկայի հարցերով փորձագետների եւ միասին գտնենք պատասխաններ, որպեսզի աշխարհի ամենամեծ շուկան՝ եվրոպական շուկան բաց լինի այս տարածաշրջանի համար ճիշտ այնպես, ինչպես Վրաստանի բոլոր քաղաքացիների համար»,- կենտրոնի բացմանը հայտարարեց Դավիթ Բաքրաձեն:

Դավիթ Բաքրաձեն այցելեց նաեւ Ապագայի տանը բացված ՆԱՏՕ-ի շաբաթվան նվիրված ցուցահանդես:

Այցի շրջանակներում պետնախարարը հանդիպեց նաեւ տեղական իշխանությունների հետ:



## ԼՈՒՐԵՐ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻՑ

### ՆՈՐ ԳՈՒՅՔ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

*Սամցխե-Ջավախեթիի շտապ օգնության կենտրոնին փոխանցվել է բժշկական նոր գույք եւ համակարգչային տեխնիկա, իսկ մինչ այդ տեղի բուժանձնակազմն անցել է արդի տեխնիկայով աշխատանքի հատուկ դասընթաց: Նոր սարքավորումների փոխանցման արարողությանը մասնակցեցին տարածաշրջանի շտապ օգնության կենտրոնի տնօրեն Դավիթ Թորուաշ եւ Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Ակակի Մաճուտաձեն:*

### ԱԽԱԼՑԻԽԵՆ՝ ՄԱՔՈՒՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹՎՈՒՄ

*Բնապահպանության ազգային գործակալության ղեկավար Թամար Բագրատիան օդի աղտոտման տեսանկյունից մաքուր քաղաքների թվում դասել է Ախալցիխեն, Զուգդիդին եւ Թելավին: Նրա պարզաբանմամբ, օդի աղտոտությունը անմիջականորեն առնչվում է տրանսպորտի, ինչպես նաեւ իրականացվող շինարարական աշխատանքների հետ: Ըստ Թամար Բագրատիայի, օդի աղտոտման տեսանկյունից, իրավիճակը ծանր է երկրի խոշոր քաղաքներում՝ առանձնապես Բաթումիում, որտեղ փոշու կենտրոնացումը 1,8 անգամ գերազանցում է թույլատրելի նորմը: Զեստափոնիում այդ նորմը գերազանցված է 4,4, Ռուսթավիում՝ 1,7, իսկ Քութայիսիում՝ 4,2 անգամ:*

### ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ ԾՂԱԼԹԲԻԼԱ-ՆԱՌԽՐԵԲԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԸ

*Ընթացքի մեջ են Ախալցիխեի մունիցիպալիտետի Ծղալթբիլա-Նառխրեբի գյուղերի ճանապարհի վերանորոգման աշխատանքները:*

*Ինչպես պարզաբանեցին Ախալցիխեի մունիցիպալիտետի վարչությունում, ճանապարհի 430 մետրանոց հատվածում բետոնե ծածկ կդրվի, իսկ անձրեւաջրերի հոսքի հատման տեղերում խողովակակամուրջներ կտեղակայվեն:*

*Ենթակառույցային նախագիծը ֆինանսավորում է տարածաշրջանային զարգացման հիմնադրամը: Աշխատանքները կավարտվեն ընթացիկ տարվա հուլիսին:*

*Տեղական ինքնակառավարման տեղեկատվությամբ, այդ ճանապարհահատվածը, տարիներ շարունակ շարքից դուրս էր եկել, ինչը դժվարացնում էր բնակչության երթեւեկությանը:*

### ՀՐԱԶԵՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ

*Սամցխե-Ջավախեթիի 25 բնակիչ իրենց սեփական կամքով ոստիկանությանն են հանձնել տարբեր տեսակի հրազեն ու զինապաշար:*

*ՆԳ նախարարության տվյալներով, հանձնվել է տարբեր տրամաչափի՝ 4 804 փամփուշտ, 400 գրամ տրոտիլ, 2 էլեկտրոդետոնատոր տրոտիլի համար, 42 նռնակներ, 4 կարճափող հրացաններ, 1 ինքնաշեն ատրճանակ, 7 հակատանկային նռնակներ, 10 ամրակներ, 5 ականանետներ, 14 պայթուցիկ, 14 պայթուցիչ, 4 հակատանկային ական, 2 հակատանկային արկ, 3 նռնակի գործարկիչ, 6 ծխի ռումբեր, 3 միավոր նռնականետի նռնակապայթուցիչ, 5 պայթուցիկ պատիճ, 1 պայթուցիկ նռնակների համար եւ 8 հակատանկային նռնակ պայթուցիչ: Հրազենը կամավոր հանձնած անձինք ազատվում են քրեական պատասխանատվությունից:*

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# ԵՐԿԻՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՊՐԵԼ ՅՈԹԱՄՍՅԱ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վեց նախագահի աշխատակազմի կողմից եւ ժամանակին հստակեցված տեղեկատվություն չէր ներկայացվել: Այսօր մենք վերահաստատում ենք հիմնավորված դիտողություններն այն կապակցությամբ, որ նախագահն ընտրությունների նշանակման մասին հրամանագիրը հրապարակի հուլիսի 8-ին, որպեսզի նախընտրական ժամանակահատվածը սահմանվի երեք ամսով: Գտնում եմ, որ այդ դեպքում մենք կխուսափենք թյուրիմացություններից եւ սխալ մեկնաբանություններից»,- հայտարարեց վարչապետը:

Հիշեցնենք, որ դեռեւս ապրիլի 8-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին կառավարության նիստում հայտարարեց, որ հոկտեմբերի 8-ին նշանակված խորհրդարանական ընտրությունների օրը չի փոխվի:

Թեպետ անդրադառնալով նախընտրական քարոզարշավի հարցին, ասաց, որ այն սկսելու ամսաթվի շուրջ խորհրդատվություններ են անցկացվում: Վարչապետի խոսքերով, երկիրը չի կարող ապրել յոթամսյա նախընտրական պայմանակարգով: «Նախագահի հետ սովորական խորհրդատվություններ անցկացրինք: Գտնում եմ, որ վատ չէ, երբ նախօրոք գիտես, թե երբ են անցկացվելու ընտրությունները եւ կարող ես ծրագրել ակտիվությունները: Հենց այդ պատճառով էլ ընդունվեց քաղաքական որոշում՝ հոկտեմբերի 8-ին ընտրությունների անցկացման վերաբերյալ»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին: Ընդսմին, վարչապետը չի բացառում, որ առանձին ընտրամարզերում մեծամասնական ընտրակարգով կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլը: «Գտնում եմ, որ չպետք է ծագի հարց, թե ինչու հոկտեմբերի 8-ին, քանի որ չի բացառված մեծամասնական ընտրակարգով երկրորդ փուլի անցկացման հավանականությունը: Եթե մենք ընտրություններն անցկացնեինք հոկտեմբերի վերջին, ապա երկրորդ փուլի համար կպահանջվեր եւս մեկ ամիս, ինչը լուրջ հիմնախնդիրներ կարող էր ստեղծել առանձնապես բարձրալեռ տարածաշրջաններում»,- ասաց վարչապետը:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, անդրադառնալով հոկտեմբերի 8-ին խորհրդարանական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ իր որոշմանը, նշեց, որ քաղաքական կուսակցություններին ընձեռվում է վեց ամիս շուտ նախընտրական քարոզարշավի ծրագրման եւ անցկացման հնարավորություն: «Իսկ ինչ վերաբերում է օգոստոսի 8-ին քարոզարշավի սկսելու մասին մեր հայտարարությանը, ապա դա պայմանավորված է բյուջեի բաշխման հետ: Խոսքը վերաբերում է հանձնաժողովների ֆինանսավորմանը: Ներկա դրությամբ, մեր բյուջեի համար դրանք բավականին ծանր են: Հետեւաբար, մենք որոշեցինք պաշտոնապես ընտրարշավն սկսել օգոստոսի 8-ին»,- հայտարարեց երկրի նախագահը:

Նշենք, որ խորհրդարանական մեծամասնության մի շարք անդամներ դիմել են Վրաստանի նախագահին, կոչ արել ետ կանչել ընտրությունների օրվա նշանակման մասին վարչապետին հասցեագրած փաստաթուղթը: Պատգամավորների կարծիքով, երկրի ղեկավարի նախաձեռնությունը մառախլապատ է ու հստակեցման կարիք ունի, քանի որ դա հակասում է ընտրական օրենսդրությանը, ըստ որի նախընտրական քարոզարշավն սկսվում է համապատասխան հրամանագրի ստորագրումից անմիջապես հետո:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՎՐԱՍՏԱՆ-ԵԱՀԿ

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԱՀԿ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՍԱՐ ԱՍՏՐԻԴ ԹՈՐՍԻ ՀԵՏ

***Ապրիլի 13-ին Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմում տեղի է ունեցել հանդիպում ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն կոմիսար Աստրիդ Թորսի հետ:***



Հանդիպմանը Վրաստանի ժողովրդական պաշտպանի առաջին տեղակալ Պաատա Բելքաձեն հյուրին տեղեկատվություն ներկայացրեց 2015 թվականին ազգային փոքրամասնությունների մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի եւ ժողովրդական պաշտպանի՝ խորհրդարանին ներկայացրած հաշվետվությունում ներառված հանձնարարականների վերաբերյալ: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ իրավական մատչելիության եւ հիմնարար արժեքների պաշտպանության հարցերը:

Հանդիպման օրակարգում էր նաեւ քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության ու 2015-2020 թվականների գործունեության ծրագիրը, որոշումների ընդունման գործընթացում ազգային փոքրամասնության մասնակցության որակի, մայրենի լեզվով ուսուցման իրավիճակի եւ տեղեկատվության ստացման տեսանկյունից առկա հիմնախնդիրները, մշակութային նույնականության պահպանման հարցերը: Հանդիպմանը անդրադարձան հակախտրականության օրենսդրության կատարման գործընթացին, ազգային փոքրամասնությունների նկատմամբ հավանական խտրականության փաստերի վերաբերյալ ժողովրդական պաշտպանի աշխատակազմի արձագանքման հարցին:

***ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն կոմիսար Աստրիդ Թորսը հանդիպում ունեցավ նաեւ ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցեցին եւ ելույթ ունեցան «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Գյուրջիստան» թերթի խմբագիր Իսլամ Ալիեւը, «Բազմազգ Վրաստան» համաքաղաքացիական շարժման ղեկավար Առնոլդ Ստեփանյանը:***

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մասնություններին հուզող հիմնախնդիրների շուրջ: Նախագահի հավաստմամբ, գլխավոր հիմնախնդիրը պետական լեզվի իմացությունն է եւ վրաց հասարակությունում ազգային փոքրամասնությունների ինտեգրման գործընթացը:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Վրաստանի նախագահի ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդական Սոփիո Շամանիդին:

ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն կոմիսար Աստրիդ Թորսը հանդիպումներ ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլու հետ:

ՀԱՐՑՈՒՄ

# NDI-Ի ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՆՈՐ ՀԱՐՑԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՑՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

### ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՆ ԵՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ, ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) կողմից անցկացված հարցման ենթարկվածները առաջնահերթային են համարում հետեւյալ երեք հարցը՝ աշխատատեղերը (57 տոկոս), գներն ու արժեզրկումը (35 տոկոս) եւ աղքատությունը (30 տոկոս):

Հիմնախնդրային առաջին եռյակին հետեւում են կենսաթոշակները (26 տոկոս), տարածքային ամբողջականությունը (23 տոկոս) եւ աշխատավարձը:

Առավել նվազ հիմնախնդրային են ճանաչվել բանտերը (մեկ տոկոս), փոքրամասնությունների իրավունքները (մեկ տոկոս) եւ խոսքի ազատությունը (մեկ տոկոս):

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ ԴԺԳՈՀ Է ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՑ

Վրաստանի բնակիչների կեսից ավելին (66 տոկոսը) բացասական գնահատական է տվել երկրի տնտեսական դրությանը:

ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հարցման արդյունքների համաձայն, գնահատելով երկրի տնտեսական իրադրությունը, հարցվածների 40 տոկոսը նշում է կատարել «վատ», իսկ 26 տոկոսը՝ «շատ վատ» սյունակում: Մասնակիցների շուրջ մեկ երրորդը (29 տոկոս) տնտեսական վիճակը համարում է «միջին»:

Վրաստանի տնտեսությունը դրական է գնահատել հարցվածների փոքր մասը. 2 տոկոսը՝ լավ, 1 տոկոսը՝ շատ լավ: Չի իմացել, ինչ պատասխանել հետազոտության մասնակիցների 2 տոկոսը:

Տնտեսական վիճակից դժգոհ Վրաստանի բնակիչներին (66 տոկոս) նաեւ հարցրել են երկրի տնտեսական խնդիրների պատճառների մասին: Ճնշող մեծամասնությունը (81 տոկոսը) համաձայնել է այն պնդմանը, թե դա գործող կառավարության, որը ներկայացնում է «Վրացական երազանք» կոալիցիան, սխալների հետեւանքն է: Այդ պնդմանը չի համաձայնել հարցման մասնակիցների 7 տոկոսը, իսկ 6 տոկոսը ձեռնպահ է մնացել գնահատական տալուց:

### Ո՞ՒՄ ԿՊԱՇՏՊԱՆԵՔ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Անցկացրած հետազոտության համաձայն, հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին «Վրացական երազանք» կառավարող կուսակցության օգտին պատրաստ է քվեարկել Վրաստանի բնակչության 15 տոկոսը, իսկ նախկին իշխող կուսակցության՝ «Միասնական ազգային շարժման» օգտին՝ 13 տոկոսը: Հարցման ենթարկվածների 6 տոկոսը պատրաստ է քվեարկել Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Ալասանիայի «Ազատ դեմոկրատներ» կուսակցության օգտին, «Լեյբորիստական կուսակցության» օգտին՝ 4 տոկոսը, «Հայրենասերների դաշինքի» օգտին՝ 3 տոկոսը, իսկ բոլոր մնացածների օգտին՝ 3 տոկոսը:

«Ո՞ր կուսակցության կամ միավորման օգտին դուք կքվեարկեք, եթե վաղը ընտրություններ անցկացվեն» հարցին չի կարողացել պատասխանել հարցվածների 38 տոկոսը: Հրաժարվել է պատասխանել մասնակիցների 12 տոկոսը: Որեւէ կուսակցության օգտին քվեարկելու մտադրություն չունի 6 տոկոսը:

### ԱՐԵՎՄՏԱՄԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ՝ ԼԱՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Ամերիկյան ազգային դեմոկրատական ինստիտուտի (NDI) կողմից անցկացված հարցման արդյունքներով, Վրաստանի քաղաքացիների ավելի քան 52 տոկոսի համոզմամբ, երկիրը պետք է պահպանի արեւմտամետ քաղաքականությունը, բայց լավ հարաբերություններ պահպանի Ռուսաստանի հետ:

Հարցման ենթարկված քաղաքացիների շուրջ 14 տոկոսը կարծիք է հայտնել, որ երկրի քաղաքականությունը պետք է արեւմտամետ լինի:

Հարցման տվյալների համաձայն, մասնակիցների 20 տոկոսը հանդես է գալիս Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու օգտին: Նշենք, որ նախորդ հարցումները ցույց էին տալիս, որ այդ թիվը հասել է 30 տոկոսի: Դրա հետ մեկտեղ հարցվածների 60 տոկոսից ավելին ցանկանում է, որ Վրաստանը դառնա Եվրամիության անդամ:

### ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է

ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հարցման արդյունքներով, Վրաստանի բնակչությունը բոլորից շատ գոհ է վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու գործունեությունից:

Վարչապետի գործունեությունը որպես շատ լավ գնահատել է հարցման ենթարկվածների 4 տոկոսը, 23 տոկոսի համոզմամբ, նա աշխատում է լավ, 42 տոկոսը Գիորգի Կվիրիկաշվիլու գործունեությունը գնահատել է միջակ, 5 տոկոսը՝ վատ եւ մեկ տոկոսը՝ շատ վատ:

Գործունեության գնահատման տեսանկյունից երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է «Միասնական ազգային շարժման» լիդերներից Դավիթ Բաքրաձեն: Հարցման ենթարկվածների 7 տոկոսը այն գնահատել է շատ լավ, 27 տոկոսը՝ լավ, 35 տոկոսը՝ միջակ, 12 տոկոսը՝ վատ եւ երեք տոկոսը՝ շատ վատ: Ցուցակում եռյակը եզրափակում է Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Նրա գործունեությունը շատ լավ է գնահատել հարցման ենթարկվածների 3 տոկոսը, լավ՝ 24 տոկոսը, միջակ՝ 50 տոկոսը, վատ՝ 12 տոկոսը եւ շատ վատ՝ մեկ տոկոսը:

Ցուցակի առաջին հնգյակում հայտնվել են նաեւ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին եւ խորհրդարանական մեծամասնության լիդեր Զվիադ Կվաճանտիրաձեն: